

8835

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

ԷջՄԻԱԾՆԻ

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

Ա. Մ Ա Ա Հ

«Գատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն,  
յԱստուծոյ ոչ երկնչէր և ի մարդկանէ  
ո՛չ ամաչէր»:

(Պատկ. Ս., Ժ. 2.)

«Գատաւորք տմարդիք, սուսք, խարոզք,  
կաշառասուք, անընտրողք իրաւանց, ան-  
հաստատք, հակառակողք և բարձումն  
առհասարակ սիրոյ և ամօթոք»:


(Խորենացի ԿԸ)

«Ողորմիմ քեզ, եկեղեցի Հայաստանեալց»...  
(Խորենացի ԿԸ)

Թ. Խ Յ Լ Ի Զ

ՏՊԱՐԱՆ Վ. Բ. 8 ՀՐԱՏԱՐԱԿԱՑԱԿԱՆ ԸՆԿ.

1910



04 NOV 2009

31.5  
E-43 48.

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

ԷջՄԻԱԾՆԻ  
ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

Ա. Մ Ա Ս Հ

«Դատաւոր մի էր և քաղաքի ուրեմն,  
յնսունագոյ ոչ երկնչէր և ի մարդկանէ ո՛չ  
ամաչէր»:

(Պատկ. Ա. ՓԲ-2.)

«Դատաւորք տմարդիք, սուտք, խարողք,  
կաշառառուք, անլնարողք իրաւանց, ան-  
հաստատք, հակառակողք և բարձունք  
առհասարակ սիրոյ և ամօթոյց»:

(Խորենացի ԿԸ)

«Ողորմիմ քեզ, եկեղեցի Հայաստանեայց»...  
(Խորենացի ԿԸ)

Խ Ա Լ Ի Զ  
ՏՊԱՐԱՆ ՎՐԱՅ ՀՐԱՑԱՐԱԿԱՆ ԸՆԿ.

1910

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

- 1. Երկու խօսք:**
  - 2. Սրտի աւելցումից (նախաբանի տեղ):**
  - 3. Էջմիածնի արդարութիւնը և Յուսիկ եպիսկոպոսի գեղծում ների գործը:**
  - 3. Այն, «ամենից առաջ արդարադատութիւն» (յաւելուած):**
-

ԵՐԿՈՒՅ ԽՈՍՔ

Աշխարհիս վրայ չկայ որևէ համայնական—սօցիալական խումբ՝ քննտանիք, դասակարգ, ցեղ, ազգ, պետութիւն, որ արդարութեան վրայ հիմ նուած չլինի և կանգուն ու յարատե մնայ: Կեանքն առաջ արդարութեան անրմբունելի է:

Իսկ կրօնական համայնքների համար արդարութիւնը էն ամենէն էական պայմանն է, արդարութիւնն է բոլոր կրօնների հիմքը, մանաւանդ քրիստոնէական կրօնինք: Ուր խախտում է այդ հիմքը, այնուղ անխուսափելի է կործանումը:

Բասան տարի է կենդան վլայ եմ այն անարդար գործերին, որ կատարում է մեր յոյսերի խանձարուը Մայր Եջմիածնում և այն էլ հետզհետէ աճող չափով. քանի տարի է որ ընկերներով միատին կամ անձամբ ենք ճաշակել Եջմիածնի անարդար արդարութիւնը իր բոլոր դառնութեամբ և կամ խեղճերի վրայ տեղացող անողորմ անարդարութիւնից նրանց հետ մէկտեղ և մենք ենք յացել:

Բոլոր վայելուչ լոիկ միջոցները գործ ենք զիել, որ անսարդաբութիւնը վերանայ, գոնէ պակսի Մայր Աթոռուից, բայց ի գնուր... Նա բարձրացաւ, ծաւալուից ու պատրաստ է կործանել էջմիածինը: Նրա դէմ բողոքում է Հայութեան Ոգին ամենուրեւը:

Ես պարտաւոր զգացի այժմ հրապարակի վրայ դնել էջմիածնի արդարութիւնը, որ անարդարութիւն է. ես պարտաւոր զգացի կոչ անել հայ մամուկին, հայ ազգին, հայ սրտացաւ մարդկանց, արդարութեան բոլոր բարեկամներին, որ օգնութեան հասնեն անարդարութիւնից խեղդուող, հիւծուող իրանց եկեղեցցուն, եթէ չեն ուզում նրա վիճանական աւերր տեսներ:

Ես յոյս ունիմ թէ Հայ ազգի արդարասկիռութիւնը արդի նուի-  
քապետութեան արդարութիւնից բարձր կը լինի, դատաստանն՝ ար-  
դար, դատաւորն՝ անաչառ:



4728-55

Անկարող եղայ ծրագրուած նիւթերիս ամբողջութիւնը հրատա  
րակել, դրամ չունենալու պատճառով, ուստի մասերի բաժանեցի  
այս բաժինն Ա. մասն անելով:

Եյս մասի հրատարակութեան համար 100 ռուբլի դրամ է իւ  
բարեկամ և Հայոց եկեղեցու սրտացաւ մի քահանայի ձեռքով մ  
անծանօթ բարեգործ, որ արգելել է քահանային իր անունն ին  
յայտնել: Ծնորհակալութիւն անծանօթ բարեգործին, որ ազգային  
արդարադատութեան սեղանի վրայ է դնում իր նուէրը գրքոյկին  
հրատարակութեամբ:

### Բենիկ վարդապետ

## ՄՐՏԻ ԱԻԵԼՑՈՒԿԻՑ

(Նախաբանի տեղ)

Տասնեակ տարիներ ծարաւի տապով լի արդարութիւն էի որու  
նում այնտեղ, կրօնաւորական այն համայնքում, ուր բաղդի ձեռքը  
ճակատադրական թափով և ինձ էր նետել:

Ես ծնուել, սնուել ու մեծացել էի մի այնպիսի ժողովրդի մէջ,  
ուր տղիտութիւնն ու անարդարութիւնը՝ իրանց բարձրադիր գահոյը-  
ների վրայ նստած, խաւարի միջից երկիր էին կառավարում:

Պատանեկական օրերուս տպաւորութիւնները՝ իրը երկաթի  
գրչով, խորունկ են փորագրուած նրբազգաց սրտիս վրայ:

Գիւղի մեծատան տաւարը ոտքի տակ էր տուել աղքատի ա-  
րիւն քրտինքով սերմած մի կտոր արտը: Այսօրուայ պէս, եմ յիշում  
թէ՝ ինչպէս խղճուկը կանգնած գիւղի տանուտէրի առջև, արցունքն  
աչքերին, գլխիկն ի կոր, յանցաւորի երկշուութեամբ էր բողոքում  
իր զրկանքի համար և դատ աղերսում:

Տանուտէրը բազմած էր գետակի բարձրադիր քարերի վրայ մի  
հաղարտ դիրքով և երկար «չիբուսից» քուլա-քուլա ծուխ էր քաշում  
հաստ շրթունքներով ու՝ խրոխտ, գոհութեամբ, բաց թողնում օդի  
մէջ դէպի վեր:

Նրան շրջապատել էին գիւղի հայրուստները և զրոյց էին անում:

Այդտեղ էր և խեղճին զրկողի հայրը իր երկու որդիներով:

Բիրտ ոյժը չի հանդուրժում բողոքն իր դէմ. զրկողները նա-  
խատինքի և գարչ հայիոյանքի տարափով վրայ վագեցին խեղճին, որ  
յանդնել էր բողոք բառնալ մեծատան դէմ:

Ծեծից ու անարդանքից առաւել խոցոտիչ էին այն արհամար-  
հական խօսքերը, որոնք գազանի անդժութեամբ նետում էին աղ-  
քատութեան երեսին:

Դատաւորի աչքումն էլ աղքատութիւնը յանցաւորութիւն էր,  
իսկ նրա բողոքը՝ յանդնութիւն:

Նա վեր կացաւ, վերցրաւ իր դալար վարոցը, մի երկու ան-  
գամ տիրաբար ճօմեց բողոքաւորի գլխին, զրկողներին հաճոյք պատ-

ճառելով. նախատեց որ «դարդակ բանի համար» գանդատ է գալիս իր չափը կորցնելով:

Մինչև այժմ որպէս սդաւորի անլուս ողք է հնչում ականջիս զրկուածի յետին խօսքերը, երբ նա մոլար քայլերով շուռ եկաւ, ամպոտ աշքերը դէպի ջինջ երկինքն ուղղեց, կանչեց ու տուն դարձաւ. «Ե՞ Աստուած, էս աշխարհում դատ ու դատաստան չկայ, եարար էն աշխարհումը կայ»:

Ո՞՛ սուրբ, սփոփիչ ինքնախարութեան...

Ես տեսել էի թէ ինչպէս դիւզի «բաւուցքները» կէս գիշերային խաւար պահուն աւազակային արշաւանքով դուռը կրկահան անելով՝ ներս էին խուժել աղքատի տուն ու խաղալ քնած գոհար աղջկան կապերտի մէջ փաթաթելով շալակել ու փախցրել, որովհետեւ աղջիկը չէր սիրում իր ձեռքը խնդրող տղային:

Դատ եղաւ. տանուտէր, գիւղի դատաւոր ու քահանայ արշաւախմբի կողմն անցան: Կաշառքը դատաւորի աշքը կուրացուց: Սաստն ու երկիւղը, բանտ ու կախաղանի անունը առևանգուածի ապասփանար ծնողների շրթունքներից հաշտութեան համաձայնութիւն դուրս քաշեցին: Իսկ քահանան, առատ պասկադրամի խոստումով յղփացած՝ կեղծ բարոյականութեան օրէնքներով, խլուած՝ պատուի արատաւորութեան երկիւղով յորդորեց աղջկան հաշտուել իր դրութեամբ հետ և «սիրել» բռնաբարողին:

Եւ այս ամենը յանուն Քրիստոնէութեան...

Եկեղեցին սրբագործեց այս բռնութիւնը. մինչ քահանան բըռթեամբ խլում էր աղջկայ ձեռքը տղայի ձեռքի մէջն ամփոփելու և հարցնում էր. «հարս, տէր ես», արցունքներն ու հեծկլտանքը՝ որ դուրս էին թռչում զոհի մարմնի և հոգու Փիղիքական տանջանքից, լորին տաճարը»:

Առևանգողների ձեռքը հարսի թիկունքից բռնութեամբ խոնարհեցրաւ նրա գլուխն ի վար՝ իբրև յօժարութեան նշան և պատասխան քահանայի հարցման:

Սյդ պամկը, այդ սրտաբեկ ճիշը, այդ արցունքն այրող, այդ հեծեծանքն աղեխարչ, դեռ չեն ջնջուել իմ յիշողութիւնից, այլ ցցուած են այնտեղ՝ որպէս խոցոտիչ փուշ շատ նման փշերի կողքին:

Իմ միջավայրում կանանց կացութիւնը միջնադարեան է կամ արդի շատ վայրենիների մէջ պահուած կացութեան նման. կինը մի անբարբառ իրաւագուրկ արարած է իր ամուսնու ձեռքում, մի սեփական իր՝ իր «գլխաւորի» ոտքերի տակն ընկած:

Ամուսինը իր վարկը հասարակութեան մէջ պահելու հապար

պիտի դաժանութեան հասած խստութեամբ վարուի իր կնոջ հետ: Աննշան առիթով թէ քմահանոյքով նրա ձեռքը՝ մերթ անզէն, մերթ փայտով զինուած, պիտի հուժու թափով իշնի կնոջ գանգի, թիկունքի, կրծքի վրայ, որպէսզի հասարակական կարծիքը իր գովեր չզլանայ նրան թէ խսկական այր մարդ է, կնիկ զսպել գիտէ:

Անպարտ կանանց անիրաւ պատուհասի օրինակներն ուղտերու կարաւանի նման շարան-շարան գալիս անցնում են յիշողութեանս գաշուով: Դրանցից մէկը մինչև այժմ մարմնիս ու հոգուս փշագաղութեամբ եմ յիշուում:

Զոհը հազարից մէկն էր բայց իմ հարազատներից: Նա մինչև կուրծքը թաղուած չեղջի մէջ ցորեն էր մաղում: Սյը ամուսինը թիակը ձեռքում ցորեն էր հաւաքում: Նրանք խօսում էին: Ուշ հասկացայ թէ մի անմեղ, սիրով արուած և արդար նկատողութեան համար ծանր թիակի մի սոսկալի հարուած իջաւ կնոջ դէմքին: Ռւշագնաց կինը, ջարդուած երկու ատամը, արիւնն ու ցորեն իրար խառնուեցան և ես՝ դեռ եօթնամեայ պատանիս, զգուանք զգացի դէպի այր մարդն ու իր բռնութիւնը ու զոհի փէշերը դրկած, նրա հետ ու նրան հաւասար դառնապէս լացի:

Իր ներքին կեանքում բռնութեամբ պանծացող, բռնութիւն գործող այդ ժողովուրդը մի կիսակենդան ստրուկ է իրանից առաւել քռնաւորի առաջ. և անհիմն չի լինի իրքեւ ընդհանուր ճշմարտութիւն ընդունել թէ ամենամեծ բռնաւորը ամենամեծ ստրուկն է:

Վերջին ուսու-տամկական պատերազմի օրերն էին, երբ՝ որտեղից և ինչու, չգիտեմ, զօրական լեզգիներ էին գալիս գիւղն ու գնում:

Նրանք անպատուհաս կերպով ոչխարի հօտից կորզում էին իրանց կամեցած գառը, բռնում հաւերը հաւանոցից ու մորթում, մտնում գիւղական տներն ու դուրս քաշում հացն ու պանիր, իւղն ու կարագ, ամեն՝ ինչ որ պէտք էր իրանց:

Սյդ բռլորից յետոյ անօրինակ լալշութեամբ ծաղրում էին խօսքով ու շարժումներով նահապետական հայ կանանց պատիւը, որոնք ճակատագրական երկիւղով ու հնազանդութեամբ լուռում էին և անկիւները փախչում պատսպարուելու համար: Իսկ նրանց ամուսինները «լազգի կամ խազախ աղաների» առջև գլուխ բացած գառան աշերով ու համբ բերաններով աղերսում էին որ խնայեն, որով աւելի էին բռըրոգում երկիւղութեան վրայ տեղացող արհամարհանքն ու քամահարանքը:

Զգիտեմ ինչ իրաւունքով ու արդարութեամբ մեր սակաւահող ժողովորից խլուած է Արագած ջրառատ, ծածկաւէտ լեռան սիրուն

արօտտեղիներն ու տրուած դաշտեցի թուրքերին, որոնք իրանց առատ հողերի վրայ ցանում են և ցորեն, և՝ գարի, և՝ բրինձ, տնկում են այգիներ, մշակում ամեն տեսակի բանջարանոցներ, պարապում են ուղտերի կարաւաններով, իսկ ամբանը իրանց ոչխարի հօտերն ու տաւարի նախիրը, այծերի հօրաններն ու ձիերի երամակները բերում հանում են Արագածի սիրուն մարմանդներն արածելու, վայելք քաշելու: Մինչդեռ սարի ու արօտի բնական տէր հայ ժողովուրդն ստիպուած է բաւարար չափով անասուն չպահել, եղածն էլ կերակրում է իր սերմած արտերի միջավայրերի արօտով, շատ անդամ արտերով իսկ, ուստի կագն ու կուիւր միշտ անպակաս է լինում:

Ես յիշում եմ թէ ինչպէս այդ թուրքերը իրանց հօտերը քաշում էին կանաչ արտերի միջով: Ստրկամիտ հայ ժողովուրդը իր «վերին» արտերի բոյսն ապահովելու համար ստիպուած էր ոչխարի, հաւի, հաւկիթի, ալիւրի, գաւան նուիրաբերութեամբ չահել վրանաբնակների սիրտը, որ արտը խնայեն:

Ես յիշում եմ թէ ինչպէս երիտասարդ թուրքերը ձիեր հեծած, միահեծան արևելցու խրոխտութեամբ շրջում էին դիւլը, իջնում այստեղ-այնտեղ, մտնում տները, վերցնում իրանց համար կարեոր իրերն ու գնում անպատիժ:

Ես կարճում եմ իմ բերած օրինակների թիւը. դրանցից իւրաքանչիւրը լոկ մի հատն է իր տեսակ տասնեակների:

Բոնութեան, անիրաւութեան, տմարդութեան այսպիսի օրինակների շարք-շարք տպաւորութմւնները պատանեկական սրտիս մէջն ամբարած ես ծեմարան մտայ աշակերտելու:

Քանի մեծանում, կարդում, մարդիկն ու իրերն աւելի պարզ էի ըմբռնում, այնքան աւելի էին լուսաբանւում ինձ համար պատանեկութեանս անհաճոյ աղօտ տպաւորութիւնները: Ես եկայ այն մէկն եղրակացութեան թէ ամենայն զրկանք անարդարութիւն է: բոնութիւնն անարդարութիւնն է, անհաւասարաւթիւնն անարդարութիւն է, կաշառակերութիւնն անարդարութիւնն է, գողութիւնն անարդարութիւն է, չափազանց հարստութիւնն անարդարութիւն է: Ուր կայ մի գող, այնտեղ կայ առնուազն մի կողոպտուած, ուր կայ մի յղփացած, այնտեղ կայ մի քաղցած:

Եթէ յիրաւի կան առաքինութիւններ և չեն նրանք լոկ կեղծ ու պատիք, իրականութիւնից հեռու վարդապետութիւններ, որոնք լոկ մարդկանց գլմի մէջ գոյութիւն ունին, դրանցից գերագոյնը անարդարութեան դէմ կուուելն է:

Այդ կոփւն ինքն Արդարութիւնն է, Հատուցումն է:

Մանր է, տաժանելի իսկ արդարութեան համար կուուելը, մա-

նաւանդ երբ կուում ես միայնակ, անօդնական, առանց թե ու թիկունքի:

Անհատապէս դժբաղդ են կուուղները. սակայն ազնիւ կուուի շարժառիթը մտքի մէջը չէ, գանգի մէջը չէ, ձեռքի մէջը չէ, որ զսպել կարողանաս, այլ սրտի մէջն է, զգացմունքի մէջ և անգուստ է, անսանձ ու չի ենթարկում կամքին: Արդարութեան համար կուուղի սիրտը այլ կերպ է կերտուած:

Իմ աւջևս բացւում էր մաքառման, կոուի ճանապարհը, որ նախ անգիտակցական, իսկ յետոյ գիտակցական կոչումն դարձաւ:

Ամեարային արձակուրդներին ես ծեմարանից վերադառնում էի գիւղ: Իմ մանկութեան այս որորանում յախուռն կերպով վերարտադրում էին յիշողութեանս մէջ հին-հին տիսուր տպաւորութիւնները, զուգորդուելով նոր բունութիւնների, նոր անարդարութեան հետ: Ամենայն խեղճութիւն ու զրկանք խորապէս աղդում էր ինձ վրայ, ամենայն խեղճ ու զրկուած հարազատ ու սիրելի էր դառնում ինձ, որին և օգնութեան էի վագում:

Գիւղը վիստում էր գողերով: Տգիտութիւնը երբ կրօնական հողից կտրում է, երբ այլս կրօնի երկինքն իր շանթերով կամ անդրդերեզմանական կեանքի հատուցմար չի սարսափեցնում տգիտութեանը, նա գառնում է անգութ, արիւնուուշտ, նա ծնում է ծոյլեր ու գողեր:

Այսպիսի մի սերունդ էր առաջ եկել գիւղում, որ գիշերները գողութեան էր ելնում: Գողանում էին հաւ, ոչխար, տաւար, իւղ, պանիք, ցան, խոտ, գարի, մէկ խօսքով՝ ամեն ինչ:

Շատ յանախ ամրան օրերու գրեթէ ամեն առաւօտ գիւղի որսէ թաղում լացն ու շիւանը, հայոյանքն ու կոփւը զրկուածների... ու զրկողների իրար էին խառնում:

Գիւղի տանուտէները մեծ մասով հովանաւոր էին գողերին, որոնց անաշխատ վատակից բաժին ունեին:

Զրկուածների մոմուռ լացը, արտասուահոծ աչքերի կսկիծ բողոքը շարժում էր ինձ և ես միջամտում էի: Մերթ սպառնալիք անիրաւ դատաւորներին, թէ «ինդիք կը գրեմ վրադ գաւառապետին», մերթ յորդոր ու ապաւնալիք գողերին, որոնց գրեթէ միշտ գտնում էի, որ ձեռք վերցնեն զրկանքից, վերադարձնեն գողոնքը և շատ յանախ ծպտեալ հաղուստով ու զինուած շրջում էի գիշերները, որ գողը բոնեմ: Քիչ չէ պատահել որ հրացանի փողն ուղղած ժամանակ գողերը գողոնքը թողած առջևս են ընկել՝ «ինայիր» կանչելով:

Ես չէի կարողանում տանել երբ կանանց թակում էին. ամեն առիթից օգտուելով խօսում, քարոզում էի այդ բարբարոս սովորու-

թեան դէմ: Թիշում եմ՝ թէ ինչպէս մի անգամ չկարողացայ ինձ զսպել՝ երբ ամուսինը իր կնոջն էր թակում. ձեռքս մի փայտ ընկաւ, որով սկսայ հարուածել ծեծողին թիկունքից: Անակնկալն այնպէս շփոթեցրեց բռնացողին, որ նա կատաղութեան մէջ ձեռք չբարձրացրաւ ինձ վրայ, բայց և այնպէս բողոքեց:

— Իմ կինը չէ, կուզեմ կը ծեծեմ, կուզեմ՝ կը սպանեմ, քո ի՞նչ գործն է որ մէջ ես ընկնում:

— Ո՛չ, բղաւեցի ես, կինը ծեծելու համար չես առել. օրէնք կայ, ես գանգատ կը գրեմ վրադ, կինդ ձեռքիցդ կը խլեն, ուրիշն կը տան:

Այս «սարքովի» օրէնքի նորութիւնը այնպէս շփոթեցրաւ մարդուն, որ լոեց և խոհեմութիւն համարեց հաշտուել կնոջ հետ:

Ես մաքառում էի նաև դրսեցիների բռնութեան դէմ, ստրկացման դէմ:

Եթէ չեմ սխալում 1886 թ. պիտի լինէր, մայիս ամսում, երբ լուր եկաւ թէ թուրքերը գալիս են սարն ելնելու իրանց նախիրներով ու հօտերով և կանանչ արտերը կերցնելով են գալիս:

Թիշում եմ, մի պայծառ առաւատ էր, շուրջս խմբուած էին գիւղի ջահէները և ես կրակ կորած քարոզում էի որ կարենք ճանապարհներն ու ջթողնենք որ այս տարի նրանք սարը ելնեն:

Հարիւրաւոր երիտասարդների, պատանիների մի բազմութիւն փայտով, քարով ու «վշտովներով» զինուած՝ հայերի ստրկական հոգին մերկացաւ մի վայրկեան և գրոհ տուին դէպի եկուորները:

Անակնկալից ապշած ու սարսափանար կարաւանն իր թիկունքը դէպի մեզ դարձուց: Փախչող կանանց սուրբն ու լացը աւելի շփոթեցրին թուրքերին և ստրկացած գիւղը անակնկալ յաղթանակի արքեցութեամբ յետ դարձաւ:

Հարկաւ շուտով ոստիկանութիւնն եկաւ և իր հեծեալներով առաջնորդեց թուրքերին դէպի լեռները, բայց այն բարոյական շահը մնաց, որ տասնեակ տարիներով հալածուած ժողովուրդը գիւտակցեց թէ ինքը ծնուած չէ լոկ կենեքուելու և տանջուելու համար, ինքն էլ իրաւունք և ոյժ ունի իրան պաշտպանելու:

Իսկ թուրքերն այնպէս զսպեցին իրանց մի առ ժամանակ, որ նախկին վայրագութիւնների հետքն էլ չմնաց: Ընդհակառակն՝ ստրկացած գիւղը, երբ իրան ուժեղ զգաց, սկսաւ բռնութիւններ գործ դնել թուրքերի վրայ, ինչպէս որ յատուկ է ամեն ստրուկ ժողովրդի: Գիւղի հօտաղները (տաւարած)՝ 10—14 տարեկան պատանիներ, պարստիկների քարերով անցորդ թուրքերին հալածում, փախնենում էին, նրանց գրաստները գրաւում, բեռների սեխն ու ձմե-

րուկը խլում ու վայելում: Վերջ ի վերջոյ ես ստիպուած եղայ ոյժ գործ դնել հօտաղներին զսպելու համար, մինչև որ համերաշխութիւնը հայերի և թուրքերի մէջ բարեկամական վիճակն ընդունեց:

Մի այլ դէսկը՝ որ «մեծ կտրճութիւն» էր համարւում և իմ վարկը, կը բարձրացրաւ գիւղում, այդ հետեւալնէր:

Պէտք է զիտենալ որ աշխարհից կտրուած ու մոռացուած այս անկիւնում Ապարանում շանթ ու որոտի ձայնով էր հնուում մի ժամանակ աղրիստաւ անունը: Ժողովրդի երկշոտ տգիտութիւնից օգտուելով՝ նրանցից շատերը նայում էին նրա վրայ, որպէս ճորտերի և օգտուում նրանից՝ որպէս սեփական ստրկից:

Մէկ անգամ գիւղի վարից վեր հողմի պէս լուր անցաւ թէ ալբիստաւը գալիս է: Տանուտէրը հեալով վագում էր դէպի մեր տուն՝ պապիս խնդրելու որ «օթախը» պատրաստի «աղի» համար:

Եկաւ «աղէն», իջաւ բակն իր ձիաւորներով: Ծերունի քահանան՝ պապս սենեակը պատրաստելուց յեաոյ հագել էր իր «պահուն» վերարկուն, կախել էր վզիցը քահանայական լսնջախաչը և կանգնել դռանը «աղին» ընդունելու:

Խրոխտաբար անցաւ «աղէն» պապիս մօտով: ծերունին խոսնարէց իր գլուխը բարի գալստի ողջոյնով, իսկ «աղէն» ոչ միայն չպատասխանեց, ոչ միայն ձեռք չմելնեց նրան, այլ՝ մի արհամարհական հայեացք միայն ձգելով նըա վրայ՝ ներս մտաւ, հանեց իր թուրը, նետեց մի կողմ մտրակը և թիկունքի վրայ լայն փոքուեց մահճակալի վրայ, շատ անկարգ կերպով ոտքերը չուելով:

Ես նստած էի սենեակի մի անկիւնում և լուռ դիտում էի այդ պատկերը: Հարկաւ, ներս մտնելիս «աղէն» ինձ բարկի չարժանապատկերը: Հարկաւ, ներս մտնելիս «աղէն» ինձ բարկի չարժանապատկերը կանգնել էր ի սպասու, աչքով էր եկել և ձեռքերը կրծքին դրած կանգնել էր ի սպասու, աչքով կայն ուրիշ բան էր եփում իմ ներքին աշխարհում:

Պարոնը պատկած տեղից ուուսերէն լեզուով հրաման արաւ ներս մտնող թարգմանին, որ տանուտէրին և այսինչ մարդկանց իսկոյն ներս բերեն: Ծերունի քահանան թարգմանից իմացաւ թէ «աղէն» պէտք է սաստիկ թակէ, որոնց կանչում է: Ծերունին խնդրեց, եթէ պէտք է սաստիկ թակէ, որոնց կանչում է: Էլլու է, իր տան մէջ այդպիսի անպատութեան չենթարկել գիւղի պատուաւորներին:

Երբ «աղէն» իմացաւ քահանայի խնդրեց, սկսաւ անարգանք թափել հիւրասէր տանտիրոջ հասցէին, որ համարձակում է իր գործի մէջ խաւուել: Պարոնն անտարակոյս զիտէր, որ ես ուուսերէն հասկանում էի: Բաժակը լցուած էր պրիստաւի անարդար, անարդ

վարմունքը հիւրընկալող տան և նրա ալեգարդ տիրոջ հստ խզեց լոռութիւնս: Ոտքի ելայ, ծանր խօսքերով երեսովը տուի պարոնի կոպիտ վարմունքը, պահանջեցի խակոյն դուրս կորչել և ապա դառնաշը եղբայրներիս, պատուիթերեցի ձիերը դուրս քանի և սար Բ-Ն-Տ-

Յանկարծակիթի եկած անբարեկիրթ ոստիկանը առանց ձայն հանելու ելաւ և ամօթապարտ փախաւ:

Երկիւղ տիրեց ծերունի պասիս և հարազատներիս ինձ համար. իսկ գիւղի աւագները՝ որ հաւաքուած էին բակը, այն կարծիքն ունէին, թէ «պրիստաւ աղէն» շուտով ինձ Սիրիք քշել կը տայ:

Ժամանակ անցնելուց յետոյ, երբ ոչ ոքինձ անհանգիստ արաւ, պիւղացիք համոզուեցան, թէ մինչև իսկ պիրիստաւ աղէն իրաւունք չունի անմեղ տեղը մէկն ու մէկին, թէկուզ յետին գիւղացուն ա-նարդելու:

Այսպէս նրբազգաց էի ես՝ դէպի մարդկային խեղճութիւնն ու բողոքող անարդարութեան դէմ, ինչ ափով կառող էի:

Ճեմարանի դաստիարակութիւնը՝ գլխաւորապէս Հայոց պատմութեան, գրականութեան դասերի միջոցով, որոնք ամփոփուած էին իմ ժամանակ նեղ, բուռն հայրենասէք ուսուցիչների ձեռքում, աւելի սրեց իմ զգայնունութիւնը, բայց սահմանափակելով լոկ ազգային թշուառութեամբ:

Հայ հալածական ազգի պատմական խեղճութիւնը, նրա պատմութեան տիսուր էջերը օր աւուր կապում էին սիրտս նրա հետ: Մանաւանդ երբ նկարագրուում էր այդ ազգն իրեւ բարձր առաքինի, անթերի, լուսամիտ և ենթակայ ուժեղ, վատարի ազգերի բարբարոսութեանց, բորբոքուում էր սէրս դէպի տառապեալ հայը, բորբոքուում և ատելութիւնս դէպի այն ամենը, ինչ որ հայ չէր և հայկական չէր: Իմ մէջս հայը հնտգիետէ սպանուած էր մարդուն:

Միտումնաւոր այս դաստիարակութիւնը անարդարութիւնից գերծ չի եղել, ևս այդ շատ ուշ հասկապաւ:

Հայ ազգի թշուառութեան կատարեալ պատկերը՝ վարժապետ-ներիս վարժ վրձինի տակից ենևելով, երբ դրում, էր առաջս, բնականաբար մէջս բռուն փափագ էր զօրանում նուիրուել հայ ազգի պաշտպանութեան գործին ու կռուել նրա վրայ թանձր տարափուլ մեղացող անարդարութեան դէմ:

Երբ ես այդ նպատակին հասնելու ասպարէզ էի որոնում, ու-  
սուցիչներս չափազանց պայծառ գոյներով էին նկարագրում Հայոց  
նուիրապետութիւնը, որ միակ ասպարէզն է եղել ազգ փրկելու և  
պահպանելու, միակ իդէալական հաստատութիւնը, որի կողերի վրայ  
փշուել են դրսի ու ներսի անարդարութեան հարուածներն ու փրկել

Է նա իր կամարների տակ պատսպարուած ազդը. այդ վանքն է, յանական կեանքը Մայր Եջմիածնի գլխաւորութեամբ:

Լինել լրկ երկու տասնեակ տարուայ հասակում, զդայուն բեա-  
ւորութեամբ, բոլորովին կեանքին անծանօթ, ձեմարանի պարապից  
ու վանական մուայլ կամարներից այն կողմն աշխարհ չտեսնել, ըստ  
հանապազ փորձուած ու քո աշքումդ հեղինակութիւն վայելող ու-  
սուցիչների պերճախօս ազգասիրական ճառերն ու ոգեստութեամբ  
փրփրուն դասերը, որոնք կախարդական թուլութեամբ դէպի վանքն  
ու վանականութիւնն էին հրապուրում. ունենալ քեզ հետ միասին  
նոյն ճամբան բռնող ջահել ընկերներ, որոնք ցմահ սէր ու անձնութ-  
րութիւն են ուխտում փոխարդաբար (աւաղ, պատմնի հաւատացող  
միամտութեան), աւելցուր սրա վլայ և քո անձնական դիպուածական  
վլչտդ, որ մեծապէս նպաստում է փախչիլ ու թագցիլ աշխարհից և  
ահա պատրաստ ես վանք մտնել, վանական դառնալ անուշ ցնորք-  
ներ գրկած, ոսկի յոցերով երերուն թէ՝ այնտեղ խկական արդա-  
րութիւն կը գտնես, խկական կեանքով կապրես և արդարութեան  
ոգին այնտեղից կառնես, կը տանես, կը տարածես այն ժողովրդի  
մէջ, որին նուիրաբերում ես քեզ:

Նական ռարձանք:

Աւաղ, մեր երազած ճամբան վարդերով չէր ցանուած. որ աւուր քանի ասլրում, մեծանում, գործում էինք, օր աւուր անսարդա-ըռութիւնը լեռնանում էր մեր առաջ վանական կեանքում: Անսարդա-ըռութեան դէմ նախսկին պատանեկական համարձակութեամբ կռուել չէինք կարող. նախ վանական ոչժիմը իր տեսակ-տեսակ կարգապա-չէինք կանոն. նախ վանական կաշվանդում էր մեր լեզուն, զսպում գրիչը. յետ հական կանոններով կաշվանդում էր մեր լեզուն, զսպում գրիչը. յետ դառնալն էլ անհնարին էր նախ այն պատճառով; որ համոզուած էր այդ մեր կոչումն է և մեր մտքով չէր անցնում իսկ թէ էինք թէ այդ մեր կոչումն է և մեր մտքով չէր անցնում իսկ թէ կարելի է յետ դառնալ, ճակատազրական վերարկուից բաժանուել: Կարելի է ոգուոր փակ դաշլոցի դաստիարակութիւնը ձեռներէցու-թերկրող՝ հոգեստ գալ ոգին, անհատական ազատութեան կայծը հանգըրել էր մեր մէջ. վերարկուն կարծես ճնշել, խեղդել էր այն ազնիւ համարձակութիւնը, մարդուն աղատ է պահում անախնկաների երկիւլից, հասարակա-կան կարծիքի ճնշումից և հզօր:

Մնում էր մեզ, մանաւանդ ինձ, հնարաւորութեաս չափով մա-  
քառել այն ամեն բանի դէմ, ինչ որ իմ կարծիքով անարդարութիւն-  
էր և ես մաքառում էի գործով, խօսքով, գրչով, յայտնի ու գաղտնի  
ստորագրութիւններով:

Անարդարութեան դէմ կռուելու հոգին վառ ու բորբոք առաջ

մէջս մինչև այժմ։ Հակառակորդներս այդ յատկութիւնը իբրև խոչով թերութիւն էին վերագրում ինձ և բուռն կերպով հալածում։ մերթ ընդ մերթ ունկնդիր էի նրանց ձայնին և զգում էի թէ ինքս ինձ անձնապէս շատ եմ վնասում, սակայն երեակայութեանս մէջ պայծառ դէմքով ու ժպտերես կանգնում էին պատմութեան ու կրօնների հերոսները, այդ հալածուած ազնիւ կոռուրաբաները, որոնց հայեացքից ես ոգևորութիւն էի քաղում կոխիս շարունակելու։

Տետրակիս շարունակութեան մէջ արձանագրուած են սակաւս  
ի հազարաց փաստեր, որոնք գաղափար են տալու վանական արդարու-  
թեան չափի, էջմիածնի անարդարութեան և իմ մարասումնեւեւ ։ ։ ։

Հնդերցողն անտարակոյս կը հարցնի. «Ի՞նչ կապ կայ այս ինքնակենսագրական տողերի և գրքոյի վերնագրի մէջ. ինչու համար են այս բոլորը»:

Բացատրեմ թէ ինչու. Դրանք լցուած սրտիս աւելցուկն են, «թէ յաւելածոյ սրտի»։ Իմ մաքառումների մէջ յանուն Սրդարութեան հալածիչները իմ բողոքներս, իմ ճիշս անդրաւութեան ու փըստութեան դէմ անուանել են անձնական հաշիւների խծրծանք, ինտրիկ, կոռուպրարութիւն և նման անուանարկիչ բառերով ջանացել են վարկարեկ անել ինձ, որպէսզի իրանք ձիւնի պէս սպիտակ, ասրի պէս սուրբ երեան։ Մինչդեռ իմ բողոքներս ու մաքառումներս բըլդուում են իմ խառնուածքից, իմ նըբազգացութիւնից, արդարութեան բուռն այլող ծարաւից։

իր անձնական հաշիւների համար կռուող մարդը անձնական շահ պիտի ակնկալէր և ձեռք բերէր. մինչդեռ իմ կրիւներս եղել են միշտ այլոց համար, բանաբարուած արդարութեան համար, տանջուած անհատների համար, տառապեալ ժողովրդի համար, յանիբարսի հալածուած թուսերի համար.

Այդ մաքառումներն ինձ ոչ մի շահ չեն բերած, բացի տան-  
ջանքից, զրկանքից և վերջիվերջոյ հիասթափութիւնից, որ այնքան  
ծանր է հիանալ գիտցողի համար:

Եթէ ընթերցողն ի նկատի ունենայ, որ փառք ասած խարկանքը կորցրել է ինձ համար իր վաղեմի արժէքը, աստիճանը, աւագութիւնը այլևս չեն պատրում ինձ, եթէ ըմբունէ որ ինձ համար հոգու անկախութեամբ ու հանդիսաւ խղճով թէկուզ բանուորի պէս ապրելն ու մեռնելն աւելի քաղցր է, քան ախտղոսներով ու աստիճանների բարձրագոյն տեսակներովը, բայց խղճմեռ ու կեղծիքով, պիտի հաւատայ որ ես ճշմարիտ եմ ասում, ճշմարիտն եմ խօսում այժմ և կը ներէ ինձ միայն այն սխալանքները, եթէ կան, որոնք անզիտակցական են, ակամալ և անկեղծ մուռռութիւն, որ ես ։

Ես այժմ անցնում եմ աերակիս բուն նիւթին:

# ԵՀՄԻԱՆՆԻ ԱՐԴԱՐՈՒԹԻՒԹ

Եկ ՅՈՒՄԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԶԵՂԾՈՒՄՆԵՐԻ ԴՈՒՇԼ

Եւ այսպէս «Տաննեակ տարիներ ծարաւի տապով լի արդարութիւն էի որոնում այնտեղ, կրօնաւորական այն համայնքում, ուր բաղդի ձեռքը ճակատագրական թափով և ինձ էր նետել»:

էջմիածնի վարչութեան անարդարութեան այլող դաղը տաս-  
նեակ տարիներով զգացել եմ սրախ վրայ, այրուել ու բողոքել մերթ  
խուզ հեկեկանքներով, որ Վանքի պարսպից դուրս չի լսուել, մերթ  
ծածկանուն, մերթ բացանուն յօփուածներով Արևմտեան և Արևելեան  
Հայոց մամուլում—«Արեկելք», «Արձագանք», «Նոր-Դար», «Տարագ»,  
«Լումալ», «Հոգիւ», «Բնկեր», «Խարազան»:

1907 թ. սկզբում ի միջի այլոց ստիպուած էլ մի տպագիր տեսրակով, իմ խնկական ստորագրութեամբ ի լուր Հոգեոր Բարձր վարչութեան բողոքել Յուսիկ Եպիսկոպոս Մոլսիսեանի դէմ:

ինքնըստինքնեան անարդարութիւնը մարդուն արատաւորող  
երևոյթ է. զբկել վատաքանել, ուրանալ արժանիք, գողանալ պը-  
պարտել, վարձատրել անարժանութիւնն ու հալածել արժանիքը բա-  
ցասում են ամենայն ազնւութիւնն: Սակայն այս արատները են հա-  
մարում եմ մարդկային ուստի և ներելի:

Բայց երբ մարդ այլոց մարդկային թերութիւնները ատելու-  
թեան ակնոցներով է մեծացնում և անողորմարար մտրակում ու  
վարկաբեկ անում ուրիշներին այն ժամանակ, երբ ինքը նոյն ու  
նման յանցանքներն աւելի խոչոր չափերով է կատարում, ճարտա-  
րութեամբ վարագուելով իր արարքը. կամ երբ մարդ իր սեփական  
վատութիւնը անմեղ մարդկանց գվին է փաթաթում, այդպիսի յան-  
ցաւոր վարմունքները ես համարում եմ աններելի, ոչ մարդկային,  
այլ գուտ դիւեկան:

Յուսիկ եպիսկոպոսը իր մարդկային սխալանքների սահմանա-



գիծն անցել էր, մոռացել իր հանապազօրեայ լնթերցած տողերը.  
«Կեղծաւոր, նախ հան զգերանդ յականէ քումմէ» և ոտքը դրել էր  
դիւսականի մէջ։ Ահա թէ ինչպէս։

Բեսարաբիայում կալուածների և թեմի կառավարիչ եղած ժամանակը՝ ինչպէս ակնարկել եմ... «Անարդարութեան երեսից» գրքոյ-կում, նա Հոգեկոր բարձր իշխանութեան վստահութիւնը շահելու նպատակով դէպի իր անշահափրութիւնը և էջմիածնասիրութիւնը, պաշտօնական թղթերով՝ բայց մեղմ վարպետ գրչով, ստուերարկում և վատարանում է իր նախորդներին՝ Աղափիրեան Գրիգոր արքե-պիսկոպոսին և Համազասապ վարդապետին:

Բեսսարաբիայում իր «բեռը բեռնելուց յետոյ» Յուսիկ սրբազանը հրաւիրւում է կշմիածնի Սինօդի անդամութեան: Սակայն նա ոսկի երազով միշտ օրորւում էր, որ մի օր վերստին Բեսսարաբիա վերադառնայ, բայց այս անդամ ոչ իրքև կառավարիչ, այլ իրքև հաստատուն առաջնորդ:

Զայն կար և կարծեմ աշխատանք էլ գործ դրուելիս պիտի լինէր, որ այնտեղ առաջնորդ դնայ Սուրբիաս արքեահանկառու.

Ինչպէս եղաւ, չգիտեմ (ես հեռու էի կջմիածնից), Յուսիկ սրբազնն չկարողացաւ տանել այդ բանը և «Մշակ» լրագրի մէջ մի յախուռն յարձակում տպեց Սուքիս արքեպիսկոպոսի դէմ, կարեսր համարելով նոյնիսկ իիշել Բեսսարաբիոյ «Կապոյտաչեայ» աղջիկներին և կապել նրանց անունը արքեպիսկոպոսի անուան հետ:

իմ ունեցած տեղեկութիւնները Յուսիկ սրբազնի վարած կեանքի վրայ մէկէն զարթեցան յիշողութեանս մէջ և ես զգուանք զգացի դէպի այդ մարդը, ոչ եթէ նրա համար, որ պաշտպանում եմ մեր օրերու կեղծ ու պատիր ժուժկալութեան, կամ խաւարամիտ՝ որ չեմ ըմբռնում բնական պահանջները մարդու, ընդհակառակն, այլ զգուեցի, որովհետև Յուսիկ եպիսկոպոսը որպէս մեղք և արատաւոր ակնարկ է փաթաթում իրանից աւելի աւագ եպիսկոպոսի զգին այն, ինչ բանում որ ինքը հինգ ու խաչ (5 +) արժէ:

Այնուամենայնիւ ես՝ գոնէ յայտնապէս, լոեցի:

Յուսիկ սրբազնը տարիներից յետոյ Երևանի առաջնորդ կարգուեցաւ: Այս անգամ էլ նա անմիջապէս գրիչը թաթախեց իր վանական դաստիարակութեան մէջ և «Արշալոյս» թերթում գանձնալուց հետո վարապետ վարդապետին, մեղադրելով նրան Աստուածաշնչի բրամների վատնման մէջ և որ գլխաւորն է 65 կոպէկի այլ գողութեան մէջ:

Այդ յօդուածի շուրջը մի բուռն հալածանք սկսաւ Կարապետ արդապետ արդապետի դէմ և նա թողեց էջմիածինն ու փախաւ Բագու և

**Առևտրական դպրոցում կրօնի վարժապետ դարձաւ:** Նա ինքն իրան պաշտպանում էր իր յօդուածներով «Հովիւի» մէջ, բայց և այնպէս Յուսիկ սրբազանի քսած մուրը յաչս հալածողների ջնջուեցաւ Կարապետի ճակտից:

Այդ օրերում տիսուր դիպուածով ես և Կարապետ վարդապետն իրար պատահեցանք Նոր-Նախիջևանում, Նահապետ եպիսկոպոսի դագաղի առաջ, յիշողութեանս մէջ վերաբտադրուեցաւ իմ ամբողջ վանական կեանքը, մեր ընկերութիւնը Կարապետի և միւս ընկերների հետ, մեր միասին անցուցած ուրախ ու տիսուր օրերը:

Նոյն այդ ժամանակ վիրաւոր սրտով լսեցի Կարապետի վիշտը իր անսարդանքի մասին Յուսիկ սրբազնի ձեռքով. յիշեցի Յուսիկ Եպիսկոպոսի շահասիրական գործերը, սպառեցաւ համբերութիւնս ու միտքս եկաւ. «Ճնուր պատասխանի անդգամին, զի՞ մի՞ առաւել ես անդգամացիս:

Եւ Քիչնե վերադառնալով ես սկսայ գրել «Անարդարութեան երեսից» գրքոյիր:

Ընթերցողին չսխալեցնելու համար պէտք է և այստեղ շեշտեմ, թէ ոչ թէ կարապետին արատից մաքրելու միտումով լոկ ես գրեցի այդ գիրոյկը (ես ցայսօր էլ դեռ չգիտեմ հաստատ թէ նրա վրայ բարդուած մեղադրանքը որչափ ուղիղ է), որչափ և մեր ընկերութիւնն անտարակոյս նախատեց այդ բանին, այլ այն պատճառով որ ինքը՝ կարապետ վարդապետի գլխին դատախազ հանդիսացող Յուսիկ սրբազնը, առաւել շատ դրամ էր իւրացըել. էջմիածնից, քան մեղադրեալը, իր ասելով որ սիրտ էր արել հանել «զշել յաքան մեղադրեալ», մոռացութեան տալով «զգերանն» իւր ական: կանէ կարապետի», մոռացութեան տալով «զգերանն» իւր ական:

Տետրակի հրատարակությամբ ու սարքածությամբ պատճենագիր է պահպանվել և պահպանվում է ՀՀ պատմական ժառանգության կազմում:

Շատ տեղերից էլ բացմաթիւ նամակներ ստացայ, որոցով ուղինակները, որ Յուսիկ սրբազնի վրայ շատ լաւ կարծիք ունեին, ափիբերան հարցնում էին տարակուսական զգուշաւորութեամբ՝ միթէ իմ արձանագրածներս ուղիղ են, չէ որ հանդարտ Յուսիկ սրբազնի վրայ այնպէս լաւ կարծիք ունեին»:

Սրանցից ոմանց պատասխանել եմ և պատասխանում են այժմ ամենքին հայկական մի առածով։ «Մի վախենալ զըմբղութան գետից, որ վշայ ու կը խշայ. վախեցիր մարմանդ գետից, որ ոչ վշայ

ոչ կը թշայ» և ռուսական մի առածով. «ԵՅ ՏԻԽՈՄ ՅՈԼՈՒՑ ՎԵՐՏԻ ՅՈՒԴԱՏԵԱ»:

Ոմանք էլ որ մօտիկից կարողացել էին մաքի թափանցող աշքով դիտել Յուսիկ սրբազնի սրտի ներսը և գիտէին իմ «յանդուգըն» ճշմարտախօսութիւնը, հաւատում էին գրածներիս, բայց խլճալով Յուսիկ սրբազնին, որ այդքան տարի մեծ ջանքերով կարողացել էր սեղ ներսը՝ սպիտակը դուրսը պահել, նկատում էին ինձ թէ ինչու ես նախ իրան Յուսիկ եպիսկոպոսին մասնաւոր գրով չդիմեցի, չառաջարկեցի ինքզինքն ուղղել և գողօնքը յետ տալ, այլ տպագրուած տետրակով մերկացը մի եպիսկոպոսի իրան չվայելած բարոյական զգեստից, որով անպատութիւն և ամօթանք կրեց նաև իջմիածինը յաչս հայ ժողովրդի և օտարների առաջ:

Սյա հարցումն անողներին էլ պատասխանեցի և պատասխանում եմ. Նախ և առաջ Յուսիկ եպիսկոպոսը այն նրբազգաց ազնիւ հոգիներիցը չէ, որի մարդկային սխալանքը բարեկամաբար յիշեցնելով կարելի վնէր ուղղել: Համոզուած էի թէ այդպիսի դիմումս լոկարնամարնանքի պիտի արժանանար հարուստ և ազդեցիկ մոնթադադաստիարակ եպիսկոպոսի կողմից:

Երկրորդ՝ Յուսիկ սրբազնը ինքը մենամարտի կոչ էր անում. իրանից աստիճանով վեր ու վար արքեպիսկոպոսներին ու վարդապետներին, անուանարկելով նրանց «Մշակ» և «Արշալոյ» թերթերում:

Բնական էր ուրեմն և արդար որ ես էլ նոյն տպագրական զէնքով այդ անսանձ արշաւողին ընդդէմ ելնէի:

Բացի այդ իջմիածինը բարոյական իրաւունք չունէր ինձնից պահանջելու, որ ես մամուլին չոիմէի մի եպիսկոպոսի կեզուն զսպնուն համար, որովհետև ինքն իջմիածինը տասնեակ տարիներ իր պաշտօնական բերան «Արարատ» ամսագրում անուանարկում է իր իսկ վարդապետներին և եպիսկոպոսներին Սինօդի օրագրութիւններից քաղուածաբար տպագրելով նրանց կատարած դրամական զեղծումները, գողութիւնները, վարք ու բարքի սխալանքները և շատ անդամ մեղաղբանքների խտացած գոյներով, նայելով, թէ իջմիածին Սինօդում և «Արարատի» խմբագրութեան մէջ որ կուսակցութիւնը, որ թայֆան է տիրում և ովկ է մեղաղբեալը:

Հաճեցէք թերթել «Արարատը» և դուք այսպիսի մարդարիտներ կը գտնէք. Ա. վարդապետին Սինօդը որոշեց զրկել այսինչ վանքն ապաշխարելու արքշիռ և անբարոյ կենաց համար. Բ. վարդապետին Սինօդը որոշեց ուղարկել այսինչ վանքն ապաշխարութեան դրամական զեղծումներ կատարելու համար. Գ. վարդապետին Սինօդը ու-

րոշեց ուղարկել այսինչ վանքը միաբան, նախապէս պահանջելով գողացած փողերը և այլն:

Եւ զարմանքն այն է, որ իր վարդապետներին ամշապէս նախշելուց յետոյ «Արարատի» էջերում նոյն իշխանութիւնը նոյն «Արարատի» մի ուրիշ համարում յանկարծ յայտարարում է ի լուր ընթերցողների թէ Ա. Բ. Դ. արքշիռ, զեղծմնաւոր, զող վարդապետներն ու եպիսկոպոսները կարգուեցան առաջնորդական փոխարութեան, Սինորդ այսինչ անդամ, ևայլն, ևայլն:

Այսպիսի նույիրապետութիւնը բարոյական իրաւունք ունի՞ այլ ևս արգելելու, որ անարդարութեան զոհ դարձած վարդապետները, որոնք իշխանութեան առջև և «Արարատի» մէջ պաշտպանութիւն ուղարկուուր չունենալով պաշտպանուին ընդդէմ անիրաւութեան և կամ խեղդեն իրանց մէջ մարդկային էն ամենէն ազնիւ գգացմունքը՝ արդարասիրութիւնը ու տառապին հոգեպէս:

Եւ այսպէս ևս հրատարակեցի «Անարդարութեան երեսից» տետրակը, որ ուղղուած է Յուսիկ եպիսկոպոս Մովսիսեանին:

Նախքան տետրակի ցրելը պարտք համարեցի երկու օրինակ պաշտօնական յայտարարութեամբ ներկայացնել հանգուցեալ Վեհապատ կաթողիկոսին և Սինօդին «ի տնօրինութիւն»:

Մէ շարք ամիսներ իրար ետևից անցան, գրեթէ մի տարի. մամուլը չզբաղուեց այդ խնդրով, սակայն լուռ էր Վեհարանը, լուռ էր Սինօդը և լուռ էր ինքը Յուսիկ եպիսկոպոսը, մինչև որ վերջապէս իմ ուղղակի ու կողմնակի յիշեցնուածներից յետոյ Սինօդը կը կնակի հրամաններով Յուսիկ եպիսկոպոսից մի բացատրութիւն ստանալով ուղարկում է ինձ՝ այդ բացատրութեան դէմ «գիտացիցի» բացատրութիւն գրելու:

Ես պատասխանում եմ Սինօդին 1908 թ. Յունիս 6-ի յայտարութեամբս, որ հետևեալն է.

«Ա. իջմիածնի Սրբազն Սինօդին»

Ա. իջմիածնի միաբան Բենիկ վարդապետից Յայտարար-բացատրութիւն.

Սինօդիդ դատաստանական մասը ուղարկելով ինձ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի բացատրութիւնը ընդդէմ իմ «Անարդարութեան երեսից» գրքոյի, իր 1907 թուի Հոկտեմբեր 1 № 2101 և 1908-ի դեկտեմբերի 1345 հրամաններով պատուիրում է ինձ «տալ փաստացիս բացատրութիւն հանդէպ բացատրութեան Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի»:

Ներուի ինձ նախ արտայայտել հետևեալ կարծիքս: Ես իմ գըր-

քոյկովս ներկայացրի Սինօդիդ մի շաբք կասկածելի կէտեր Յուսիկ արքեպիսկոպոսի գործունէութիւնից ի ստուգութիւն Խինօդիդ և տեղաեղ էլ պաշտօնական թղթերի համարներ, որոնք իմ և Յուսիկ սրբազնի փոխարէն պիտի վկայէին ճշմարտութիւնը՝ եթէ Սինօդիդ ուշադրութեանն արժանի լինէին: Սինօդիդ բազմից հիմնուելով լրագրական լուրերի և կամ թղթակցութեանց վրայ, որոնք ստորագրեալ հաստատութեանց և հոգկորականութեան զեղծմանց վերաբերեալ ակնարկներ են պարունակել, իսկոյն քննութիւն է նշանակել և աշխատել է երեան հանել ճշմարտութիւնը: Այդպէս պիտի վարուէր Սինօդիդ նաև իմ տետրակիս այն յօդուածների վերաբերութեամբ, որոնք լոկ ստուգելու ցուցումներ են պարունակում: Իսկ յիշատակուած պաշտօնական փաստաթղթերը պիտի արդարադատութեան սեղանի վրայ դրուէին և ըստ այնմ կարգառուէին:

Սինչեռ Սինօդու տեսրակս Յուսիկ սրբազնի բացատրութեանը զրկելուց յետոյ նրա բացատրութիւնն էլ ինձ է զրկում, երեք իմ նոր բացատրութիւնն էլ նրան զրկելու համար և այսպէս անվերջութեամն և զործը դատաստանով չի վերջանայ:

Այս հանգամանքներն ինձ ստիպում են լրիւ և ամբողջական բացարձութիւն չտալ Ս. Սինօդիդ՝ խնայելով աշխատանքը, որ կարող է զուր կորչել, ուստի ես հակիրճ կերպով կը շարեմ այստեղ մի քանի ցուցումներ. եթէ դոքա արդարապէս վճռուին, ես մնացեալը հետզհետէ. կը շարունակեմ.

իմ տետրակիս մէջ ես շատ տեղ լող կասկածներ եմ յայտնել Յուսիկ սրբազնի գործունելութեան դէմ և խնդրել եմ; որ նա ինքը հերքէ այդ կասկածները, եթէ միայն թիւրիմացութիւններ են: Յուսիկ սրբազնի բացատրութիւնը կարդալուց յետոյ, ես միանգամայն համոզուեցայ, որ իմ լսածներս ու արձանագրածներս լոկ թիւրիմացութիւններ չեն:

Յուսիկ սրբազնի բացատրութիւնը հերքումն չէ իմ շարած յօդուածների, այլ մոլեգին անարգանք իմ դէմ, վատաբանութիւն իմ անձնաւորութեան և ներբող իր անձին իր խակ շրթունքներով։ Եթէ Սրբազն Ատեանդ բարեհաճի լուրջ ուշադրութեամբ վերստին կարդալ այդ բացատրութիւնը, անտարիակոյս կը նկատի, որ հայհոյանքներից դուրս Յուսիկ սրբազնը ամենայն պատրաստականութեամբ հանդէս է եկել վկայելու ասածներիս ճշմարտութիւնոց ։

Նախ՝ Յուսիկ սրբազնը բառացի և նոյնիսկ աւելիով հաստատում է իմ տեսրակի Ը. յօդուածը, որ վերաբերում է ճանապարհածախուց չափազանցութեանը: Կարծես առաւել փայլ տալու ճշմարտութեանը, որ անսահման ու մոլորեցնող գարոյթի հետևանքն է ան-

շուշտ, նա արդարացման մեղադրող եղանակն է ընտրել, որպէս պատճառաբանութիւն։ Նա ասում է՝ «միթէ ես ուրիշներից աւելի շատ եմ ատացել»։ Այսինքն, եթէ ուրիշներն էլ են անբարեխիղճ եղել, ուրեմն ես արդար եմ։

Երկրորդ՝ Յուսիկ սրբազնն ասում է թէ իր անձնական գործերի և հաշիների համար պարտաւոր չէ համար ու հաշիւ տալ ոչ ոքի. միաբաններից ամենքն էլ իրանց հայրենի տան և ազգականների համար նիւթական բարիքներ են անում, այնպէս էլ ինքը. Յիշերի համար պահանջելու որևէ մէկից, որ իր հարաբեկ ոչ ոք իրաւունք չունի պահանջելու որևէ մէկից, այլ արագատներին չօգնէ. Սակայն Յուսիկ սրբազնը մոռանում է թէ մեզգատաներին չօգնէ. Խակայն Յուսիկ սրբազնը մոռանում է թէ մեզգատաներին ոգնել հարազատների ոք ազատ է. և իրաւատէր իր արդար վաստակինից իւրաքանչիւր ոք ազատ է և իրաւատէր իր արդար վաստակինից օգնել հարազատներին, այլ ոչ հաստատութեան հաշուով:

Չորրորդ՝ Յուսիկ սրբազնը՝ երևի իր հոգեկան աշխարհում շամպունածները հեռու են ճշմարտութիւնից, իր բամբակած լինելով որ ասածները հեռու են ճշմարտութիւնից, իր բամբակած լինելով վերջացնում է մի մերկացուցիչ յայտարարութեամբ ցատրութիւնը վերջացնում է մի մերկացուցիչ յայտարարութեամբ թէ իր «ոստիներն ուշացել են, իր գործերի վրայից օրինական ժամանակն անցել է». այսինքն դաւնօսուն անցել է, որովհետև 10—16 տասոի է անցել:

Սրդ, Յուսիկ սրբազնի բացատրութեան լոկ այս սրբամբ գտների վրայ հրատիրելով սրբազն Ատենիդ ուշադրութիւնը, վատա-  
հանում եմ աւելացնել, որ արդարասէր դատաւորութեան համար այս  
վկայութիւնները բաւական կը լինէին որ բացատրութիւնների և և  
քննութիւնների կարիքը վերանար: Սակայն որովհետև սրբազն Ա-  
ռեանութիւնները գործութիւն» է պահանջում ինձնից, ես կրկին  
տեսանք և փաստացի բացատրութիւն» է միանդամ յիշուած փաստերը հակիրճ լու-  
կը շեշտեմ տետրակիս մէջ միանդամ յիշուած փաստերը հակիրճ լու-  
սաբանութեամբ հանդերձ, շարելով և միքանի նորերը.  
1. Տետրակիս Դ. յօդուածում ասել եմ, որ Յուսիկ սրբազնը

1896 թուից մինչև 1898 թուականը դրամների մնացորդ է պահել 4244 ռուբլ 10 կ. որ իրաւունք չունէր: Նկատելու է թէ 1897 թ. մատեանը ինչո՞ւ պիտի 1898 թ. Մայիսի վերջին առաքուի Սինօդի վաստ. Յայտարարութիւն Յուսիկ Կափսկուալոսի յանուն Սինօդի ի 26 Մայիսի 1898 ամի թ. 57:

2. Ե. յօդուածում ասել եմ, որ Յուսիկ եպիսկոպոսը Քիչնեց  
հեռանալու նախօրէքին Շթարմ պայման է կապել, որոնցից մէկը  
Քաղաքային վարչութեան հետո Վերջին պայմանագրով կալուածքի  
մի տունը տրում է վարչութեան՝ զօրքերի համար Յ տարի ժամա-  
նակով 18050 ռուբլիով. ուրեմն տարեկան մօտաւորապէս 6016 ռ.  
մինչդեռ Յուսիկ սրբազնի վերը յիշած թ. 57 յայտարարութեան  
մէջ գեկուցուած է Սինօդին տարեկան 5500 ռուբլի: Ընդհանուր  
գումարից կանխավճար է վերցրել նա Քաղաքային վարչութիւնից  
(և ոչ թէ կաշառք, որպիսի զրաքարտութիւն սրբազնն աշխատում է  
փաթթել իմ վեցը, չեղած խօսքեր ինձ վերագրելով) մօտաւորապէս  
3000 ռուբլի: Այդ գումարը բնականաբար պիտի մուտք գրուած լի-  
նէր 1897 թուի կալուածական մատեանում: Բայց ես որոնեցի ու  
մատեանում չգտայ այդ գումարը:

Բացի այդ եռամերայ պայմանի 18050 ռուբլի գումարը բնականաբար պիտի մուտք գրուած լինէր 1897, 1898, 1899 թուերի մատեաններում բատ պայմանի նոյեմբեր և Մայիս ամիսներում: Մակայն այդ տարիների մատեաններում յիշեալ գումարի մուտքից պակաս տեսայ արձանագրուած մօտ 10000 ռուբլ.

Պարտք եմ համարում յիշեցնել որ 1898 թուի մատեանը Սինօդըն ինձ չէր զրկել, երևի չկայ. իսկ սեադիրը ներսէս արքեպիսկոպոսի մօտ պահուած է, որից քաղել եմ իմ տեղեկութիւնները: Խընդուռում եմ Սինօդիդ ինքը քննէ 1897, 1898, 1899 և 1900 թուերի կալուածական մատեանները ու տեսնի թէ 18050 ոռոբի գումարը մտած է մատեան լրիւ, թէ սխալուում եմ ես:

Ուղէսպի պրամիտ դատաւորի առաջ գործն ու դրութիւնն առաւել պարզուի, ես պատիւ ունիմ սրա հետ միասին ներկայացնելու պայմանի մի պատճէնը (վաւերական պատճէնը՝ կարող էմ ցոյց տալ միայն, բայց ինձ մօտ եմ պահում); Սրամիտ աշքը կը տեսնի որ պայմանաժամն սկսում է 1897 թ. Յուլիսի 7-ից, մինչդեռ կապալավարձն սկսում է ստացուել նոյն թուի Յունուարից, ուրեմն նախքան պայման կապելը: Յունուարից—Մայիսի ժամանակի համար Յուսիկ սրբազնն ստանում է 2883 ռ. 33 կ., ապա թէ Մայիսի 1-ից մինչև 1900 թ. Ապրիլի մէկը սահմանում է 5200 ռուբի ի տարին: Այս բաներն ինձ համար շատ պարզ չեն, թերևս Մինօդդ

կարողանայ թուի թէ ոչ միամտութեամբ խճողուած այդ պայմանը կարգաբանեցի Բանցի այդ, պայմանի դրամական քանակը .չի համապարզաբանում Յուսիկ Եսլիսկոպովի թ. 57 զեկուցման թուերին:

3. Գրքոյիկս Զ. յօդուածում կասկած եմ յայտնով, որ Սուբդի  
սրբազնը Բենդերեան և Ալեքսանդրեան փողոցների անկիւնում հին  
շէնքի մէջ մէքանի նորոգութիւններ անելով Սինօդին զեկուցել է  
շէնքի մէջ մէքանի նորոգութիւններ անելով Սինօդին զեկուցել է  
թ. 57 յայտարարութեամբ թէ «նորաշէն խանութիւնների և բնա-  
կրանների» համար ծախսուել է 18000 ռուբլի: Խնդրում եմ Սի-  
նոդից ստուգել ընդդածս Յուսիկ եպիսկոպոսի խօսքերը վերոյի-  
շեալ յայտարարութիւնից: Զոյդ ընդ նմին պահանջել Բեսսարաբիայի  
այժմեան առաջնորդից կալուածոց մեծ քարտէսը, որ կազմուած է  
այժմեան առաջնորդից կալուածոց մեծ քարտէսը, որ գեռ.  
1884 թուականին: Մյոյ քարտէսից պարզապէս կը տեսնուի, որ գեռ.  
1884 թուականին՝ ուղեմն Յուսիկ եպիսկոպոսի կալուածոց կառա-  
վարիչ նշանակուելուց շատ առաջ, Բենդերեան և Ալեքսանդրեան  
փողոցների անկիւնում եղել է մի շէնք 16 կտորից բաղկացած: Մինչ-  
դու Յուսիկ եպիսկոպոսի «նորաշէն խանութիւն և բնակարանք» պար-  
զապէս ակնարկում է թէ այդ շէնքը նոր չէնք է: Այլապէս Սինօդը  
չէր կարող մի երկու կցուած խանութիւն կամ նորոգութեանց համար  
18000 ռուբլի ծախսել:

Այս խնդրի և առհասարակ իր երևելի դորժունչութեան ասամբ Յուսիկ սրբազնը վկայ է կոչում Մինօդիդ անդամ Տ. Յուսիկ վարդապետին. ես էլ վերոյիշեալ չենքի մասին ի պաշտօնէ զեկուցել եմ ժամանակի լիազօր քննիչ Տ. Յուսիկ վարդապետին, ուստի ես էլ եմ խնդրում որ Նորին Բարձրապատութեան վկայութիւնն ի նկատի ունենաք:

4. Ժ-ըդ յօդուածում կարծիք եմ յայտնել թէ Յուսիկ սրբազն-նը՝ Կոնսիստորիայի շէնքի շնութիւնը միայն իր վրայ առնելով, կաս-կածների տեղիք է տուել: Նախ՝ շնութեան գործից ապօրինաբար, ինքնագլուխ հեռացրել է Կոնսիստորիան. Երկրորդ՝ Մինօդի նախա- հայութից ինքնագլուխ 2000 ռուբլուց աւելի է ծախսել:

1893 թ. Բնասարաբիայի Կոնսիստորիան Յուլիկ սպասարկումը  
առանձին ցանկութեամբ հաստատութեան համար նոր շէնք կառու-  
ցանելու խնդիր է դուռմ Սինօդի առաջ. Սինօդդ նոյն տարրուայ Ապ-  
քիլ 21 թ. 386 գրութեամբ պատուիրում է Յուլիկ եպիսկոպո-  
սին Կոնսիստորիայի միջոցով կազմել տալ «օրինաւոր նախահաշիւ և  
նախանկար առնելի շնութեան և մատուցանել Սինօդիս»: 1894 թ.  
Յուլիսար 37, թ. 120 և Ապքիլ 13, թ. 1306 հրամաններով Սինօդը  
կրկնութիւններ է անում նոյն իմաստով: Կոնսիստորիան 1894 թ.  
Մայիսի 4, թ. 1029 յայտարարութեամբ 7550 ուութու նախահաշիւ

Է ներկայացնում: Սինօդն այդ նախահաշիւը չի հաստատում: 1896  
թ. Մարտ 12, թ. 681 յայտարարութեամբ կոնսիստորիան նոր զե-  
կուցումն է անում և նախահաշիւ է ներկայացնում 3000 ռուբլու:  
Սինօդն այդ նախահաշիւը հաստատում է 1896 թ. Մայիսի 1, թ.  
710 հրամանով:

Գրագութիւնից պարզ երևում է, որ Սինօդը կոնսիստորիային՝ հաստատութեանն է յանձնում չէնքի կառուցումն և ոչ անհատի՛ Սակայն թեմի կառավարիչ Յուսիկ եպիսկոպոսը (այն ժամանակ վարդապետ) իր 1896 թ. Յունիս 10, թ. 199 առաջադրութեամբ չէզօքացնում է կոնսիստորիան և չէնքի շինութեան գործն ամբողջովին առնում է իր վրայ, պահանջելով միայն ծախուց համար մի մատեան ժապավենել և տալ իրան:

